

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՒՒՆՔ

(Մարտ-նահյան-լի-ն)

ԽԱ.

Սաւրբ Կարապետ և Փոկաս. Յովհաննէս Եպիսկոպոս Կապանեցի. Անաստաս Բերդը. Ստեփաննոս Եպիսկոպոս Մեղրեցի. Սարգիս Եպիսկոպոս. Նսիսակիայի եկեղեցւոյ հասարակութիւն. Նորա հանդիսաւոր հասակաբեր. Ստեփաննոս Եպիսկոպոս. Սարգիս Եպիսկոպոս. Նորոգ շինութիւններ. Նախարար-ն-լի-ն. Նորապետի հաւատարմաց ցոյցակը. հաւատարմութիւն և բնակչութիւն յարաբերութիւնը յետնորդին հետ:

Պարզ, վճիռ, սառը, խոխոջիւն աղբիւրի մօտ, սաղարթախիտ ընկուզեհոտ թանձր ստուերի տակ նստած՝ ես ազատ շունչ եմ քաշում յոգնածութիւնից և հայեացքս պտտցնելով վանքի ձորի ամէն մի կէտի, ամէն մի ժայռի, ամէն մի ջրի ու տեղի վերայ՝ խորասուզվում եմ այդ ձորի հին պատմութեան մէջ: Մի հասարակ, վայրենի, ժայռապատ ձոր, որ այժմ՝ վերը նկարագրած հնութիւններից աւելի ոչինչ չէ ներկայացնում մեզ. հասկանալի է թէ ինչ ալմկալից անցեալ է ունեցել: Բաւական է յիշել որ այդ տեղ եղել է եպիսկոպոսարան, մետրոպոլիտների աթոռակալութիւն, հոգեւորականաց և իշխանաւորաց երբեմնակի ժողովատեղի, ապաստանի տեղ և տուն Սիւնեաց իշխանութեան աւերման ժամանակ, նշանաւոր իշխանների և հոգեւորականների դամբարան և վերջապէս անուանի, հռչակաւոր, հարուստ ուխտատեղի: Ի՞նչ կասկած որ յիշեալ պատմական իրողութիւնները իւր ժամանակի հայ ժողովրդի կեանքի մէջ մեծ նշանակութիւն կունենային և կկապէին հայերին այդ տեղի հետ:

Պատմութիւնը մեզ աւանդում է, որ այժմեան աւերակ եկեղեցիների և շինութիւնների կառուցանելուց շատ ժամանակ և հնագոյն տարիներ առաջ՝ այդ նեղ և անձուկ ձորակի

մէջ՝ մի պատշաճաւոր տեղում շինուած էր կրաշաղախ քարերով սուրբ Կարապետի եկեղեցին, որ խիստ սքանչելագործ, տհաճու և անուանի էր մերձակայ սահմանակիցների համար: Նորա մօտ էլ բլիսում էր մի քաղցրահամ աղբիւր:

Այժմ սուրբ Կարապետի հետքն անգամ չկայ և նորա անհետանալու ժամանակը մեզ յայտնի չէ: Հաւանական է որ նա Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի մահից շատ տարիներ յետոյ դեռ ևս կար: Իսկ յիշեալ քաղցրահամ աղբիւրը գուցէ այժմեան ընկուղեհու տակի՝ հիւսիսակողմի ժայռից բլիսող աղբիւրն է, որի ավի մօտ նստած գրում եմ սոյն տողերը:

Սոյն ձորի մէջ թանձրամած կաշկառոտում կայ մի այլ եկեղեցի՝ Փոկաս հայրապետի անունով, որից և այդ տեղը կոչւում էր Փոկաս: Այդ երկու եկեղեցիները իւրեանց իւրախառն բժշկարար աղբիւրներով և իբրեւ ուխտատեղի՝ հռչակել էին ձորի նշանակութիւնը Վայոց ձորի հայ ժողովրդի մէջ:

Ձորի հռչակն առաւել ևս տարածուեց, երբ Բաղաց թագաւորութիւնը վերջանալուց և իշխանական տոհմի և աշխարհի աւերուելուց յետոյ, նոյն իշխանական տոհմ վերջին տարաբազդ սահմաններից մինը՝ Յոհաննէս եպիսկոպոս՝ աստ անդ շրջելուց յետոյ, 554—1105 թուականին եկաւ Վայոց ձոր գաւառը և կամեցաւ բնակել յիշեալ Սուրբ Կարապետի եկեղեցու մօտ:

Իւր բնակութեան համար նպատակայարմար գտնելով այդ ձորը՝ Յովհաննէս եպիսկոպոս՝ այդ տեղի վերայ առաւել հաստատուն պայմաններ ձեռք բերելու մտքով, գնաց ներկայացաւ պարսից Մահմուտ սուլթանին, որից և ստացաւ բարձրագոյն հրովարտակ այդ տեղ համարձակ բնակելու համար:

Նա ժողովեց իւր շուրջը կրօնաւոր և ճգնազգեսաց մարդիկ, իսկ աշխարհական մարդկանց հեռացրեց այդ վայրից: Տէրունի նշաններ կանգնեցրեց վայրի շուրջը, սրպէսզի չանցնեն կանայք և լիտի մարդիկ: Եկեղեցին առաւել հարստացնելու համար առաւ սահմանակից երկու գիւղերից — Գանձակ և Տխարը — հող և անդաքստան:

Սակայն եպիսկոպոսի խաղաղ և ճգնազգեաց կեանքը երկար չտևեց: Սահմանակից Հրասեկայ պարոնի բերդապահը, ինչպէս պատմեցի նախընթաց ԽԳ գլխում, չարամտութեամբ կամենում էր որսալ և սպանել Յովհաննէս եպիսկոպոսին և աւերել կրօնաւորներին տունը: Նոյն գլխում մենք տեսանք որ եռանդուն եպիսկոպոսը, հմուտ լինելով պարօնի լեզուին և փոխելով հագուստը պարսկական ձևի, գնաց Սողոմոն՝ Սուլթանի մօտ և նորա մահամերձ որդուն բժշկելով՝ ստացաւ Հրասեկայ և Անապատ բերդերը ի ժառանգութիւն եկեկեցւոյն: Եկեղեցու վերայ բերդերի հաստատութեան արքունական հրովարտակը կարգացել և ճշգրտել է նոյն ինքն Ստեփաննոս Օրբելեան:

Ի դէպ է այս տեղ յիշատակել, որ Անապատ անունով բերդ այժմ բոլորովին անյայտ է և ես իմ ճանապարհորդութեանս միջոցին, չեմ որոշել նորա տեղը և չեմ յիշել ոչ մի գլխում: Այժմ աչքի առաջ ունենալով Ամաղուի նորավանդի պատմութիւնը, որի մէջ շատ տեղ յիշուած է Անապատ բերդը, պէտք է եզրակացնել որ նա, այդ բերդը, նոյն նորավանդի շրջակայքումն էր և ունէր ագարակներ:

Ամաղուի այժմեան շրջակայքի աշխարհագրական դիրքը ինկատի առած, Անապատ բերդի տեղը որոշելու համար կարելի է կանգ առնել մի բերդի վերայ՝ «Շիրակ Խանի Բերդ» անունով երթիչ գիւղի գլխին, որ նկարագրուած է իմ նկատողութեանց ԺԹ գլխում և որը հեռու է Ամաղուի նորավանդից դէպի հիւսիս 6—7 վերստից ոչ աւելի, հին Գանձակ գիւղատեղի սահմանում:

Սակայն կարելի է անել և մի այլ ենթադրութիւն, այն է թէ Անապատ բերդը կանգնած էր այժմ Ագեար կամ Այար (գլ. ԺԹ) հայաբնակ գիւղիմօտ, ներկայ աւերակ բերդատեղում: Սոյն ենթադրութեան հիմունքն երևում են Օրբելեանի այն խօսքերից, որ Սիւնեաց եպիսկոպոս Ստեփաննոս, Փախըըմնեհ մականուամբ, Ելտիուզ աթաբէգից ինդրեց և ստացաւ յիշեալ եկեղեցու ժառանգութեան համար Ագարակի ձոր (այժմ Այար) գիւղն, ազատ անելով աշխարհական բոլոր հարկերից գիւղի այն ամէն մասերն,

որոնք վանքին կապտեցան էին, այսինքն՝ «զհող և զջուր, զայգի, զգիւղ և զագարակ և բերդն իսկ Անապատայ»^{*)}։

Սորանից երևում է, որ յիշեալ բերդը Ագարակի ձոր գիւղի սահմանումն էր և հաւանական է որ այդ գիւղը դրած էր այժմեան Ագեար կամ Այար գիւղի տեղ, որ հեռու է Ամաղուի ձորից առ նուազն 10 կամ 12 վերստ։

Հրաշկարերդը միջանի անգամ խլուեց եկեղեցուց և նորից վերադարձաւ նորան, բայց Անապատ բերդը Յովհաննէս եպիսկոպոսի ժամանակից մինչև Օրբելեանի օրերը, երկու հարիւր տարուց առաւել մնաց անընդհատ՝ եկեղեցու ժառանգութիւն։

Յովհաննէս եպիսկոպոսը կառավարելով խորածոր անապատի Սուրբ Կարապետի եկեղեցին՝ հրաշալի բաներ էր գործում այնքան որ հրամայեց գորտերին լռել և նոքա լռեցին։ Տխարբայ գիւղից, որ այն ժամանակ դրած էր այժմեան Նորավանքի գէմ, դէպի հարաւ, սոսկալի ժայռի գլխին, մի կին իւր ծծկեր մանուկով պատահամբ ժայռից ընկնում է ձորը և եպիսկոպոսը իրաջակնքելով ապրեցնում է նորանց։ Այսպէս է ասում Օրբելեանի պատմութիւնը։

Յովհաննէս եպիսկոպոսը մեռաւ 663—1214 թուականին և երկու քարի մէջ թաղուեց իւր աղօթարանում։ Այստեղ աւելորդ չէ յիշել որ եպիսկոպոսի մահուան տարին կամ պատմական և կամ տղադրական սխալ է, ըստ որում նա, Յովհաննէս եպիսկոպոս Կապանեցին, արդէն տարիքով էր՝ երբ եկաւ Վայոց ձոր ուրբ Կարապետի եկեղեցին և այնուհետև չէր կարող ապրել այնքան տարի, որքան յատկացնում է նորան նորա մահուան շրջանը։

Ըստ Օրբելեանի՝ իբր 617—1168 թուականին մեռաւ Սիւնեաց Գրիգոր եպիսկոպոս Մեղրեցին Վայոց ձորում, նորա մարմինը ամիսիեցին Նորավանքում՝ ընդ երանելի և սուրբ եպիսկոպոսի Տէր Յովհաննիսի Կապանեցւոյն^{**)։} Մեղրեցու որդին

(*) Օրբել. պատմ. նահ. Սիւ. գլ. 47.

(**) Օրբել. Պատմ. նահ. Սիւ. գլ. 49.

Ստեփաննոս եպիսկոպոս (Փախրելմսեհ) որ յիշեալ Կապանեցոց յետոյ ժառանգեց Նորալանքը, քառասուն և վեց տարի եպիսկոպոսական պաշտօնում մնալով՝ մեռաւ և թաղուեց նոյն Նորալանքում 665—1216 թուականին, ըստ նոյն Օրբելեանի*): Պարզ է ուրեմն որ Կապանեցոց մահից յետոյ 46 տարի եպիսկոպոսութիւն վարող Ստեփաննոսը չէր կարող մեռնել առաջինից ելլալ տարի միայն յետոյ: Ուրեմն՝ ենթադրել պէտք է որ Յովհաննէս եպիսկոպոսն մեռաւ ոչ թէ 663, այլ 613 հայկական թուականին:

Յովհաննէս եպիսկոպոսից յետոյ՝ նորան յաջորդեց Մեղրեցի Գրիգոր եպիսկոպոսի որդի Ստեփաննոս եպիսկոպոսը, որին պարսից բարձրագոյն իշխանաւորները շատ սիրելով՝ գգուական տնունով կոչում էին Փախրելմսեհ, այն է Բրիստոսին սիրող: Իւր գիրքից օգուտ քաղելով՝ Ստեփաննոս եպիսկոպոսը թեմական տիտղոս հաստատեց Նորալանքում, հրովարտականքով և ընծայաբերութիւններով առաւել ամրացրեց սրբալայրի ներկան և տպագան և Հայոց Գրիգոր կաթողիկոսից շրջաբերական ձեռք բերելով՝ շրջապատ գաւառները Նորալանքի սուրբ ուխտի վիճակ օեփականեցրեց:

Այսպիսով՝ խորաձոր անապատի սուրբ Կարապետի եկեղեցին հոգեւոր և վարչական կեդրոն դառնալով՝ աստիճանաբար բարձրանում էր իւր նշանակութեամբ: Նորա զարգանալուն ևս առաւել նպաստում էր քրիստոնեայ պետութիւնը, որ քայլ առ քայլ յառաջ գնալով՝ դուրս էր մղում Սիւնեաց աշխարհից պարսկական իշխանութիւնը: Այդ շրջանում վրաց Թամար թագուհու քաջաբազուկ զօրապետները, հայազգի եղբարք Զաքարէ Սպասաւորը և Իվանէ Աթաբէգը, ուժգին կերպով տարածում էին դէպի արեւելք յիշեալ թագուհու աշխարհակալութիւնը:

Յիշեալ Ստեփաննոս եպիսկոպոսին սիրում և պատում էին

(*) Օրբել. Պատմ. նահ. Սիս. գլ. 49.

Նաև այս զօրապետներն, որ տուին նորան իբրև Հանգստեան տեղի Հաղարձին վանքն և Աբառաձոր գիւղը կայենում (այժմեան Ղազախի գաւառում)։ Բայց նորա բուն պաշտօնատեղին Սիւնեաց գաւառն էր, ուր 46 տարի եպիսկոպոսական պաշտօն վարելով, մեռաւ 665—1216 թուին Դարալագեագի Առփայ գիւղում և թաղուեցաւ Նորալանքում։

Սա գեռ իւր կենդանութեան ժամանակ իւր քրոջ որդուն— Սարգիս—եպիսկոպոս էր ձեռնադրել տուել Աղուանից կաթողիկոսի ձեռքով և իւր մահից յետոյ սոյն Սարգիս եպիսկոպոսն յաջորդեց իւր քեռոյն— Ստեփաննոսին—և բնակւում էր Նորալանքի մեծատանում—սուրբ Կարապետի եկեղեցում։

Նորալանքի սուրբ ուխտն առաւել Հանդիսացնելու մտքով Սարգիս եպիսկոպոսը, Լիպարիտ իշխանի խորհրդակցութեամբ, մտածեց եկեղեցի կառուցանել։ Սորանից գուցէ կարելի լինի եզրակացնել՝ որ այդ միջոցին սուրբ Կարապետի եկեղեցին հնացել էր և արդէն չէր համապատասխանում խորաձոր անապատի՝ իբրև եպիսկոպոսարանի և աթոռանիստ տեղի բարձր նշանակութեան։

Սակայն Սիւնեաց գաւառի այս նորաբողբոջ աթոռը սոյն Սարգիս եպիսկոպոսի օրով չկարողացաւ անյորդով յառաջ գնալ։ Նա հակառակութեան հանգիպեց Տաթևի վանքի կողմից, ուր այդ միջոցին իւրեան աթոռակալ էր յայտարարել ոմն Յովհաննէս եպիսկոպոս, վերոյիշեալ Ստեփաննոս եպիսկոպոսի հօրեղքօր որդին, ուրեմն Սարգիս եպիսկոպոսի հեռաւոր ազգականը։

Սիւնեաց երկիրը այդ միջոցին քաղաքականապէս դեռ ևս խարխուլ գրութեան մէջ, դեռ նոր էր անցել մի պետութիւնից միւս պետութեան ձեռքը, հին եպիսկոպոսական աթոռի աւերակների վերայ դեռ նոր էլ ծլում նոր աթոռը և ահա Տաթևը միւս կողմից բարձրացրեց իւր վաղեմի, պատմական իրաւանց դրօշը։

Բայց խաղաղասէր Սարգիս եպիսկոպոսը չկամենալով հակառակութիւն և եկեղեցու օձտումն, համաձայնում է տալ Տաթևի Յովհաննէս եպիսկոպոսին բոլոր վիճակն, իսկ Նորա-

վանքի աթոռի համար առնում է միայն Վայոց ձոր գաւառը, Ճահուկը (Ձահրի) և Նախիջևանը:

Այս անելով Սարգիս եպիսկոպոսը գնաց Հայոց Կոստանդին կաթողիկոսի մօտ, ստացաւ նորանից շրջաբերական թուղթ, որպէս զի վերոյիշեալ երեք գաւառները հաստատուն վիճակ չինին Նորավանքի եկեղեցուն և որպէս զի այնուհետև ոչ ոք կաթողիկոսներէց, եպիսկոպոսներէց և իշխաններէց հակառակ չկանգնեն այս սահմանադրած վճռին: Երկու աթոռները միմեանցից անկախ յառաջ գնացին մինչև Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի իշխանութեան ժամանակ, որ իւր ուժեղ զօրութեամբ միացրեց նորանց:

Վերը յիշեցի, որ սուրբ Կարապետի եկեղեցին կարծես չէր գոհացնում այն ժամանակի Նորավանքի աթոռակալութեան բարձր նշանակութեանը: Վերջինս պահանջում էր մի վերանորոգութիւն, մի շքեղ տաճար. ուստի Վայոց ձորի այն ժամանակի կառավարիչ իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելեանի և Նորավանքի աթոռակալ Սարգիս եպիսկոպոսի փոխադարձ խորհրդով և նախաձեռնութեամբ, 665 հայկական կամ 1216 փրկական թուականին հիմնարկուեցաւ և Եփե տարուց յետոյ աւարտուեց սուրբ Նախավկայի անուանով, ութը խորհրդաւոր խորաններով, այն գեղապաճոյճ եկեղեցին, որի այժմեան աւերակները նկարագրուեցան նախընթաց գլխում:

Երբ այս մեծավաստակ աշխատանք և անչափ ծախիւք շինեալ գեղեցկայարմար եկեղեցին ի Նորավանս, աւարտուեց 1223 թուականին, այդ ժամանակ սուրբ տաճարի նաւակատիւսը կատարեցին շքեղապանծ հանգիստով, Սիւնեաց աթոռին վայել արժանաւորութեամբ, ուր ներկայ էին եպիսկոպոսներ, վարդապետներ, գահագլուխ իշխաններ, ազատներ, տանուտէրներ և երեւելի բազմաթիւ և բազմահամար գիւղականներ, որոնց մասին պատմութիւնը աւելորդ է համարում յիշատակել: Հանգիսին ներկայ էր և Բուպակ մեծ իշխանը—Աթաբէգ Իվանէի նշանաւոր գործակալը՝ լիպարիտ Օրբելեանի աները:

Երեւակայեցէք դուք այժմ թէ այս ամայի, նեղ, ժայռոտ

անուղի, քարքարուտ, մեցառախիտ, ճահճոտ ձորի մէջ, 1223 թուականին, մեղանից մօտ եօթ հարիւր տարի առաջ ի՞նչ խռնումն, ի՞նչ իրարանցում, ի՞նչ աղմուկ, ի՞նչ շարժում, ի՞նչ հետաքրքրութիւն, ի՞նչ կեանք պէտք է տիրապետէր այդ ձոխ բազմութեան ժողովուրդուց, սուրբ Նախավկայի եկեղեցու նաւակառեաց օրը:

Նքեղ հանդիսակատարութեան համար վկաները մեզ համար՝ են լոկ այդ ձորի մերկ, սեպացած ժայռերը, նորանցից պոկուած գլորուած ահագին բեկորները, Նախավկայի ճաքճքած՝ մամուածածկ պատերը, կանգուն և խոնարհուած խաչքարերը և այլն: Սոցանից պէտք է հարցնենք հանդիսակատարութեան մանրամասնութիւնները, հայ հանդիսականաց ջերմեռանդ ծունրադրութիւնը, աղօթարար բազմութեան սրտաբուղիս հայցուածքը, հոգեւորականաց երգեցողութեան ելեւէջները, շարականների քաղցրութիւնը, ոսկեղօծ խաչերի փայլը, բուրվառների բուրումն և այլն:

Զէ՞ որ սոքա այն ժայռերն են, որ 1223 թուականին, Նախավկայի Նաւակառեաց բազմութեան գղրկոյրը իրարից խլում և անդրադարձնում էին: Զէ՞ որ այս ցանուցիր գլորուած սրբատաշ քարերը պոկուել են այն սուրբ տաճարի պատերից, որոնց վերայ, 667 տարի առաջ, հայ ժողովուրդը դրոշմում էր իւր հրաբորբոք շրթուներին համբոյրները:

Այո՛, նոքա են, բայց պապանձուել են. ի զուր ես սպասում նոցանից հարցերիդ պատասխան: Քեզ պէս այցելուներ նոքա շատ են տեսել և այսուհետեւ ևս կտեսնեն, բայց լուռ կմանն յաւիտեան. դարձրու աչքերդ նոցանից, այդ սառը քարերից և ինչ ունիս գտնելու՝ որոնիր գրաւոր պատմութեան մէջ: Սա է որ փոքր ի շատէ կարող է քեզ գոհացնել.

(Շարունակելի)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.